
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԵՂԵՌՆԸ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

Երջանիկ են, բայց դա չեն գիտակցում աշխարհի այն ժողովուրդները, որոնք չունեն քաղաքակրթություններ կործանող հարևաններ: Հայ ժողովրդի բախտը այդ առումով չի բերել: Հանձին թուրքերի՝ արդեն մեկ հազարամյակ է (նրանց՝ Հայկական լեռնաշխարհ ներթափանցելու օրից սկսած), ինչ վտանգված է հայ մշակույթի գոյությունը: Լինի դա Քաղաքերում հրկիզված 10 հազար սագաղաթ, թե՛ Խժկոնքի պայթեցված վանք, միևնույն ոճն է: Օրինաչափություն է, ուր որ թուրքն է, այնտեղ հայ մշակույթի կորուստն է, և տվյալ վայրում որքան շատ են նրանք, այնքան մեծ են մեր մշակութային ժառանգության կորուստների չափերը: Այդ տեսակետից Ադրբեջանի տարածքում մեր կորուստներն այնքան էլ մեծ չեն, քանի որ համարյա ոչ մի շրջան մինչև վերջերս զուտ թրքաբնակ չէր, բայց փոքր կորուստն էլ կորուստ է նույնիսկ այնպիսի մեծաքանակ մշակութային ժառանգություն արարած ժողովրդի համար, ինչպիսին հայերն են:

Ավագ եղբոր՝ Թուրքիայի օրինակով, անցած տասնամյակների ընթացքում Ադրբեջանն էլ, զավթած հայկական հողերը յուրացնելու հույսով ջանք ու եռանդ չի խնայել հայ մշակույթի բազմաբնույթ ու բազմադարյան կոթողները հողի երեսից ջնջելու ու հետքերն անհետացնելու ուղղությամբ:

Անցնող յուրաքանչյուր տարվա հետ ավերվող հուշարձանների թիվն

ավելի է մեծացել, իսկ աշխարհագրական ընդգրկումը՝ ընդարձակվել: Ջարդարարների ձեռքից գերծ չեն մնացել անգամ հայաբնակ տարածքներում գտնվող պատմական հուշարձանները, ինչպես օրինակ՝ ԼՂԻՄ-ի, Հյուսիսային Արցախի և Կուրի ձախափնյա հայաբնակ շրջաններում գտնվող շատ հնուքյուններ: Առավելապես փրկվել են նրանք, որոնք գտնվում էին անմիջապես հայկական բնակավայրում և բնակչության ամենօրյա հսկողության ներքո: Արդյունքում, առավելապես տուժել են Հյուսիսային Արցախի (մասնավորապես՝ Գետաբեկի և Դաշքեսանի շրջանները) և ներկայիս ԼՂՀ-ին հարակից՝ ագատագրված շրջաններում (Քել-բաջար, Լաչին, Ղուբաթի, Չանգեյան, Չարբայի, Ֆիզուլի, Աղամ) գտնված պատմական հուշարձանները: Ոչնչացվող հայկական հուշարձանների շարքում առաջին տեղը բռնում էին հայերեն արձանագրություններն ու խաչքարերը, ապա՝ վանքերն ու եկեղեցիները, այլ կերպ ասած, մշակույթի ակնհայտ քրիստոնեական շերտը, իսկ օրինակ, հայկական կամուրջներն ու բերդերը, աղբյուրներն ու բնակելի կամ հասարակական կառույցները գրեթե անվնաս են մնացել, քանի որ, թուրքերի կարծիքով, դրանք սեփականել ու աշխարհին թուրքական հայտարարելը դժվար գործ չէր:

Ուշագրավ է, որ պետական մակարդակով հայկական հուշարձանները քանդելու գործընթացը ոչ պատահականորեն զուգահեյպես միաժամանակ դրանք «աղվանական» հայտարարելու ծանապարհով յուրացնելու գործընթացին: Ակնհայտ է, որ թուրքերն իրենց իսկ ընդունած տեսությանը (այն է՝ հայկական հուշարձանները հայկական չեն, այլ՝ թուրքերի քրիստոնյա նախնիների՝ աղվանների մշակույթ) չէին հավատում, այլապես «աղվանական վանքերի ու խաչքարերի» մասին գրքեր հրատարակելու հետ մեկտեղ այդքան եռանդազին չէին զբաղվի ավերածությամբ: Պարզապես հայկական մշակույթի եղեռնը աշխարհի աչքից թաքցնելու համար էր միայն, որ հորինվեց «աղվանական» վարդապետը:

1988 թ. վերջերից պատմական հուշարձանների ոչնչացման գործընթացն աննախադեպ չափեր ընդունեց: Օգտվելով պատերազմական իրավիճակից, թուրքերը հայոց եկեղեցիները սկսեցին կործանել ոչ թե պայթեցումներով, ինչպես գլխավորապես աշխատում էին մինչև այդ, այլ՝ թնդանոթային ու տանկային համազարկերով, որոնց մեծ տրամաչափի արկերի պայթյուններին չէին կարող դիմակայել անգամ կրաշաղախ ամրակուռ պատերը: Այսպես օրինակ, մի ակնթարթում փլատակների վերածվեց՝ միանգամայն կանգուն ու անվնաս Եղնասարի վանքը՝ Գետաշեն գյուղի մոտ՝ վերջինիս գավթման օրերին:

Սաորն ներկայացվում է հայ մշակույթի առավել ակնառու կորուստների ցուցակը:

Ծար գյուղի գերեզմանատունը, ուր բազմաթիվ էին ինչպես XIII-XV դարերում Դոփյան իշխանական տան ներկայացուցիչների գերեզմաններին կանգնեցված կարևոր արձանագրություններ ունեցող խաչքարերն ու տալանաքարերը (1236,1274,1289,1484 թվականներ և այլն), այնպես էլ XVI-XVIII դարերում՝ մեղիքության շրջանի մի շարք պատմական նշանավոր դեմքերի ու հանգուցյալների հիշատակին կանգնեցված կոթողները (1511,1549,1676,1717 թվականներ և այլն): 1950-1960-ական թվականներին գյուղի հարավ-արևելյան եզրին կառուցված դպրոցի պատերի մեջ ագուցվել են իսպառ ավերված պատմական ու խիստ ընդարձակ այս գերեզմանատնից տեղափոխված ու որպես սոսկ շինաքար՝ կտորտանքի վերածված խաչքարեր ու տալանաքարեր (մեր հաշվումներով՝ 133 քեկոր):¹

Ծար գյուղի Մայր եկեղեցին XIII դարի սկզբի շինություն էր: XIX դարի վերջին կիսավեր էր: Նույն դարի մեջ էր մինչև 1950-ական թվականների վերջը: Այժմ հետքն իսկ չկա:

Ծար գյուղի Սբ. Սարգիս եկեղեցին կառուցվել էր 1274 թվականին և միանգամայն անվնաս ու կանգուն էր մինչև 1950-ական թվականների վերջը: Այժմ հիմնավեր:

Գեղամիջո վանքը գտնվում էր Տրտու գետի ձախ ափին, Ծարի հարավային ստորոտում: Հիմնադրվել է 1301 թվականին: Քանդել են 1960-ական թվականների սկզբներին և այդ քարերով կառուցել մի քանի բնակելի տուն ու Չրաղ գյուղի դպրոցի շենքը: Վերջինիս պատերի մեջ դեռևս նկատվում են մի արձանագրությանը պատկանող 22 քեկոր:²

Անանուն վանք, ըստ ամենայնի XII-XIII դարերի կառույց: Գտնվում էր Տրտու և Ծար գետերի միախառնման տեղում: Նույնպես հիմնավեր է: Քանդել են 1950-1960-ական թվականներին:

Անանուն եկեղեցի, որը, ըստ շուրջը պահպանված գերեզմանատան խաչքարերի ու եկեղեցու հորինվածքային առանձնահատկությունների, կարելի է թվագրել XII-XIII դարերով: Գտնվում էր Քելբաջարի շրջանի Ղամշլի գյուղից երկու կիլոմետր հարավ-արևմուտք: Պայթեցվել է 1983թվականին:

1 Տե՛ս «Թուրքական դպրոց-Հայկական խաչքարերից». «Հայաստանի Հանրապետություն», օրսերթ, 1995, N 49, 10 մարտ, էջ 2:

2 Տե՛ս «Մի արշանագրության հերթերով», «Ազարասար», 1994, N 44, էջ 4:

Խաչքարերով գերեզմանոց, XII-XIII դարեր: Գտնվում է Աղղայա գյուղի եզրին, բլրի վրա: 1970-1980-ական թվականներին տեղահանվել ու կտրատվել են գրեթե բոլոր խաչքարերը:

Եկեղեցի, 1304թ., գտնվում էր Մարջումակ (պատմական՝ Մրշման) գյուղի եզրին: Քանդել են 1980-1983թթ. ընթացքում: Այժմ միայն կրաշաղախ հիմքերն են նկատվում: Ըստ վաղուհասցի հայերի վկայության, մինչ այդ եկեղեցին միանգամայն կանգուն էր:

Խաչքարերով գերեզմանոց, XII-XIV դարեր: Գտնվում է նույն եկեղեցու շրջակայքում: Հիմնավորապես ավերվել է 1980-1982 թվականների ընթացքում:

Եկեղեցի, XIII դար: Գտնվում էր Մարջումակ գյուղից մեկ կիլոմետր հյուսիս-արևմուտք: Նույնպես ավերել են 1980-ական թվականների սկզբին: Քարերը փոխադրել են գյուղ և օգտագործել բնակարանային շինարարության մեջ: Տեղում կրաշաղախ հիմքերի մնացորդներն են:

Սբ. Ասրվաձածնա վանք, XII-XIII դարեր: Գտնվում է Տրոտու գետի աջ ափին, Գաղիվանքից 2,5 կիլոմետր գետի հոսանքով վեր, այնտեղ, ուր Տրոտուին է միախառնվում Իգաձորի վտակը (ձախից): Իբր «աղվանական», այս վանքի մասին մի հոդված էր հրատարակել ոմն Թոֆիկ Աբրովան՝ 1982թ.: Հինք ընդունելով վանքի երեք եկեղեցիների, գավիթների ու գերեզմանատան խաչքարերի վրա պահպանված 13 միավոր պատմական կարևոր (բնականաբար՝ հայկական) արձանագրությունները՝ մեր պատասխան հոդվածը լույս տեսավ 1989թ.¹, որով և ապացուցվեց, թեևս ապացուցելու կարիք չունեցող մի հանգամանք, որ վանքը հայկական է և ոչ թուրքերի «քրիստոնյա նախնիների» կառուցածը: Դեպքերի բերումով, հնավայրը վերստին այցելելու հնարավորություն ունեցանք միայն տարածքի ազատագրումից հետո՝ 1993թ. սակայն պատկերը զարհուրելի էր: Պարտությունից զազազած թուրք «գիտնականները» իրենց սիրտը հովացրել էին վանքի տարբեր շինությունների որմերից բոլոր վիճագրերը քերել-ջնջելով: Ոչնչացված էին 1174 և 1178 թվականների՝ երկու շինարարական և բազմաթիվ նվիրատվական բովանդակությամբ արձանագրությունները: Անհետացրել էին արևելյան կողմում, մատուռի մուտքի առջև կանգնած 1195 և 1248 թվականների երկու գեղաքանդակ խաչքարերը, և կատարել էին մի շարք այլ ավերումներ:

¹ В. А. Арутюнян, С. Г. Карапетян, Н. П. Саркисян, Монастырский комплекс Сурб Аствацацацин в гаваре Цар, ՀՀԳԱ «Լրագիր» (հասարակ գիտություններ), 1989, N 7, էջ 82-92.

Գաղիվանք, XIV-XX դարեր: Վանական համալիրը՝ շուրջ 1700 տարի շարունակ, պարբերաբար հարստացվել ու լրացվել է զանազան պաշտամունքային ու աշխարհիկ շինություններով: Գլխավոր Կաթողիկե եկեղեցին 1214 թվականի՝ գմբեթավոր-սրահ հորինվածքով կառույց է: Սրա հարավային որսից 2-3 մետր հեռավորությամբ, 1970-ական թվականներին Քաբվի «գիտնականները» շուրջ 3 մետր խորությամբ մի ընդարձակ փոս փորեցին, որն անցնող տարիների հետ պիտի հողի մտավածքի ու սողանքի պատճառ դառնար՝ կործանման պայմաններ ստեղծելով եկեղեցու համար: Ու թեև առ այսօր եկեղեցին կանգուն է, բայց հարավային ու արևելյան ճակատներում ամբողջ բարձրությամբ խորացել են վտանգավոր ճաքեր:

Անանուն վանք, XIII դարի կառույց է: Գտնվում էր Քաչաքաղի (նախկին՝ Լաչին) շրջանի Արտալու և Զյուրդ-Հաջի գյուղերի միջև: Պայքեցվել է 1983 թվականին:

Եկեղեցի, XVI-XVII դարերի կառույց է: Գտնվում էր Քաչաքաղի շրջանի Ուննանով գյուղից 1 կիլոմետր հյուսիս: Քանդել են 1982-1983թթ.:

Գարպաս, 1613թ.: Գտնվում էր Քաչաքաղի շրջանում, հռչակավոր Ծիծեռնավանքի մոտ: 1989-1992 թվականների ընթացքում ավերել են դարպասի նորոգման արձանագրությունը (1613թ.) կրող հատվածը:

Գերեզմանոց, XII-XX դարեր: Գտնվում էր Քաչաքաղի շրջանի Ներքին Փարաջան (պատմական՝ Հարար) գյուղի հարավ-արևմտյան ծայրին: 1970-1980-ական թվականներին գերեզմանոցի տարածքի մեծ մասը բուլղոզներով ավերել են և տեղում անասնապահական համալիր կառուցել: Ներկայումս երբեմնի ընդարձակ գերեզմանոցից միայն 3 արձանագիր շիրմաքար է մնացել:

Գերեզմանոց, XVI-XX դարեր: Գտնվում էր Քաչաքաղի շրջանի Մինքյանդ (պատմական՝ Մննի) գյուղի հարավ-արևմտյան ծայրում, եկեղեցու շուրջ: Անհետացել են բոլոր շիրմաքարերը:

Աղբյուր, XVI-XVII դարեր: Ընդհանրապես թուրքերը հայկական աղբյուրները չեն քանդել, որովհետև դրանց շնորհիվ էին ապրում, բայց աչքներից չէին վրիպում աղբյուրների շինարարական արձանագրությունները, որոնք, որպես կանոն, քերում, ջնջում էին: Այդպես են վարվել Չանգելանի շրջանի Դարա-Գիլյաթաղ գյուղի աղբյուրի նույն ճակատին փորագրված արձանագրության հետ, որից սակայն մի քանի տառ փրկվել ու ընթերցվում է:

Եկեղեցի, XVI-XVII դարեր: Գտնվում էր Չանգելանի շրջանի Սորու

գյուղի մոտ՝ Թարնայուտ (պատմական՝ Դոնակերտ) գյուղատեղում: Ըստ Կապանի Ներքին Հանդ գյուղի բնակիչ Հայկ Հովհաննիսյանի վկայությամբ՝ եկեղեցին մինչև 1980-ական թվականները դեռևս գոյություն ուներ և աչքի էր ընկնում իր ընդարձակությամբ: Այժմ հետքերը հազիվ են նշմարվում:

Գերեզմանոցներ. XVII-XVIII դարեր: Մեկը գտնվում էր Չանգելանի շրջանի Ռ-ազդադա գյուղի հարավային եզրին, մյուսը՝ այդ և Թոփ գյուղատեղերի միջև: Երկուսն էլ ավերվել են 1989-1993 թվականների ընթացքում:

Խաչքար: Գտնվում էր Չանգելանի շրջանում, Թոփ գյուղատեղի միջնադարյան կամրջի մոտ: Անհետացվել է 1989-1993 թվականների ընթացքում:

Գերեզմանոց, XVIII-XX դարեր: Գտնվում էր Չանգելանի շրջանի միջև 1967թ. հայաբնակ Ղարաբաբա (Տանձաթափա) գյուղի եկեղեցու շուրջ: Ավերվել է 1989-1993 թվականների ընթացքում:

«**Օհանա կղզի**», Չանգելանից հյուսիս, Սուսանսար անտառապատ լեռնաշղթայի վրա, Գրիան բերդի հարևանությամբ գտնվող սիջնադարյան այս եկեղեցին պայթեցվել է վերջին տարիներին:

Անանուն եկեղեցի, 1641թ.: Գտնվում էր Ղուբաթլիի շրջանի Վերին Ջիբիբլի գյուղում: Զանդեղ են եկեղեցու արևմտյան ու արևելյան պատերը և այդ կողմերից եկեղեցու մեջ՝ տարիներ շարունակ լցրել գյուղի աղբը:

Եկեղեցի, XII-XIII դարեր: Գտնվում էր Ջերրախլի շրջանի հին Թումաս գյուղում (Դաղ-Թումաս): Այստեղ եկեղեցին քանդել են 1970-ական թվականներին, իսկ քարերը օգտագործել դպրոցի շենքի սանդուղքների սիջև:

Վանքասարի եկեղեցի, VI-VII դարեր: Խաչածև գմբեթավոր հազվագյուտ շինություն է, որը, վերականգնելու պատրվակով, միանգամայն այլափոխվեց 1980-ական թվականների կեսերին: Գտնվում էր Աղղամի շրջանում: Այստեղ պահպանված միակ խաչքարն էլ փոխադրել էին Աղղամի, այսուհետ կոչված քարեղարան-բացօթյա թանգարան, ուր, հայկական, պարսկական. նաև խազարական գերեզմանաքարերի հետ մեկտեղ ներկայացնում էին որպես «աղվանական» հուշարձան¹:

«**Կախարք**» վանքի **եկեղեցի,** 1741թ.: Գտնվում էր Ֆիզուլու և Հաղղուբլի շրջանների սահմանագլխին: 1989-1993 թվականների ընթացքում

տեղահան են արել ու կոտրել եկեղեցու շինարարական արձանագրությամբ բարավորը:

Եղնասարի վանք. XII-XIII դարերում կիսնված ու XVIII դարում վերականգնված վանական հասակի, որի եռանավ բազիլիկ հորինվածքով եկեղեցին կործանվեց 1991թ. մայիսի սկզբին՝ թուրքական տանկից արձակված արկի պայթյունից:

Խունիսավանք. IX-X դարեր: Հյուսիսային Արցախի տարածքում սակավ հանդիպող հորինվածքներից է (խաչածև-գմբեթավոր, միախորան): Գտնվում էր Գետաբեկ շրջկենտրոնի մոտ: Սրա ութանիստ թմբուկը 1983 թվականի ընթացքում քանդել էին: Ի դեպ, դրանից հետո այլևս չենք տեսել իսկ սուլավորությունն այնպիսին էր, թե եկեղեցին քանդման ընթացքում էր, քանի որ աշխատանքային գործիքները՝ բահերն ու քլունգները տեղում էին:

Եկեղեցի, IX-XI դարեր: Գտնվում էր Գետաբեկի շրջանի Փոլաղու գյուղի եզրին: Զանդեղ են եկեղեցու արևմտյան ճակատը և օգտագործում են որպես գյուղի ընդհանուր աղբանոց:

Կորոռ, V-VII դարեր: Գտնվում էր գյուղի արևմտյան եզրին: Վերջին անգամ տեղում ընկած վիճակով տեսել ենք 1981թ., իսկ 1983թ. այն անհետացված էր: Տեղացիների վկայությամբ, իբր փոխադրել են Բաքվի թանգարան:

Խաչքար, 1624թ.: Գտնվում էր Գետաբեկի շրջանի Մեծ Ղարաձուրատ գյուղի մոտ, Խամշի վանքում: 1983թ. այն ցարդոտել էին՝ վերածելով բեկորների:

Եկեղեցի, XVI դար: Գտնվում էր Փոքր Ղարաձուրատ գյուղի մեջ: Մի թուրքի կողմից քանդվել են պատերը, սնուն են միայն արևելյան ճակատն ու մնացած մասերի հիմնապատերը: Ներսը վերածված է բանջարանոցի:

Եկեղեցի, XVI-XVII դարեր: Գտնվում էր մեծ Ղարաձուրատ գյուղում: Զանդեղ են եկեղեցու արևմտյան և հարավային մասերը: Պահպանվում են միայն խորանի և հյուսիսային ավանդատան մնացորդները: Տարածքի մի մասում բնակելի շենք է կառուցված:

Չարեքավանք, XVII դար: Գտնվում էր Գետաբեկի և Դաշքեսանի շրջանների սահմանագլխին՝ Շամխուր գետի ձախ ափին: Վանական խոշոր համակիր է՝ բազմաթիվ կառույցներով: Դրանք բոլորը թուրքերի կողմից 1980-1989թթ. օգտագործվում էր որպես անասնապահական հասակի, իրենք էլ մեջն էին բնակվում:

Եկեղեցի, IX-XI դարեր: Գտնվում էր Գետաբեկի շրջանի Ղալաբյանդ գյուղում, ուր Փառիսոս քաղաքատեղի մնացորդներն են: XIX դա-

¹ Տես «Մի խաչքարի հնորոշում», «Ազատամարտ», 1994, N 47, էջ 13:

րի վերջին այստեղ 12 եկեղեցիներ կային, բոլորն էլ՝ IX-XI դարերի կառույցներ: Այժմ միայն մեկը կա՝ կիսավեր, որը թուրքերը օգտագործում են որպես զուգարան:

Եկեղեցի, IX-XI դարեր: Գտնվում էր Բանանց գյուղից (Դաշքեսանի շրջան) 8 կիլոմետր հարավ: 1986-1987թթ. բուլղոզներով մաքրել ու լցրել են ձորը:

Կամուրջ, XII-XIII դարեր: Բանանց գյուղի մոտ: Երկաթուղու շինարարության ժամանակ քանդվել է պայթեցումների հետևանքով:

«**Ղրմարազ կարմիր եղջի**», IX-X դարեր: Գտնվում է Չովդառ և Փիք գյուղերի միջև (Դաշքեսանի շրջան): 1982-1983թթ. քանդել են եկեղեցու մուտքը, տապալել հսկայական բարավորը:

Եկեղեցի և գերեզմանոց, XVII-XVIII դարեր: Գտնվում էր Դաշքեսանի շրջանի, ներկայիս Խաչքուլաղ գյուղի տարածքում: Հիմնավորապես քանդել են 1970-ական թվականներին՝ շրջանային ղեկավարության կարգադրությամբ:

Եկեղեցի, XVI-XVII դարեր: Գտնվում էր Դաշքեսանի շրջանի Յնծահալ գյուղում: 1960-ական թվականներին հիմքից քանդել են ու տեղում դարձրել կառույց: Նույն գյուղի ավերված գերեզմանատան տապանաքարերը դարձրել մուսթին հարմարեցված են որպես աստիճաններ:

Մաքուռ, XII-XIII դարեր: Գտնվում էր Դաշքեսանի շրջանի Բյուլլու գյուղի տարածքում, 3 կիլոմետր հյուսիս-արևելք: 1970-ական թվականներին պայթեցվել է ու վերածվել փլատակների:

Եկեղեցի, XVI-XVII դարեր: Գտնվում էր նույն շրջանի Գյաղամիշ (հնում՝ Գետամեջ) գյուղում: Բացի հյուսիսային պատից՝ մնացածը քանդել են վերջին տարիներին:

Եկեղեցի, XVII դար: Եկեղեցին փլուզելու նպատակով 6 սյուներից 2-ը իսպառ քանդել ու կտրել են հողից: Չանագան այլ հատվածներում ևս ավերումներ են կատարել: Գտնվում էր Դաստափոր գյուղում:

Եկեղեցի, XI-XII դարեր: Գտնվում էր Կիրանց գյուղի մոտ: Բարձր էլեկտրահաղորդման սյուն կանգնեցնելու պատրվակով, եկեղեցին հիմնավեր են արել 1970-ական թվականների վերջերին:

Գերեզմանոց, միջնադար: Գտնվում էր Ամրվար գյուղում: 1970-ական թվականներին բոլոր տապանաքարերը տեղահան են արել և լցրել մոտակա գետակը:

Եկեղեցի, XVI-XVII դար: Գտնվում էր Վերին Քարիատ գյուղի մոտ: Քանդել են հանքավայրերի շահագործման պատրվակով՝ 1970-ական թվականներին:

Եկեղեցի և գերեզմանոց, XIII դար, Հաջիշեն գյուղից 2 կիլոմետր արևմուտք, խիտ անտառի մեջ: Եկեղեցին քանդել, իսկ գերեզմանոցը տակնուվրա են արել:

Հայրենական պայքերազմում զոհվածների հիշարանին կառուցված հուշարձան: Գտնվում էր Բանանց գյուղի եզրին: 1969թ.՝ մի գիշերվա մեջ, քանդել են շրջանային ղեկավարության կարգադրությամբ: Գործը դատական ընթացք է ստացել, բայց մեղավորները չեն պատժվել (հուշարձանի հեղինակ՝ ճարտարապետ Ռ. Իսրայելյան):

Սբ. Սարգիս եկեղեցի, XVII դար: Գտնվում էր Գանձակ (Գյանջա) քաղաքում: 1980-ական թվականներին կատարվել են «վերանորոգումներ»: Արդյունքում՝ եկեղեցին արտաքուստ երեսպատվել է աղյուսով ու կորցրել հայկական ոճը: Օգտագործվում էր որպես ժողովուրդների բարեկամության պալատ:

Գերեզմանոց, XII-XVIII դարեր: Այս գերեզմանատան մակերեսը ենթարկվել է մասնավոր հողաբաժանման (քաղաքային խորհրդի որոշմամբ) ու այդ կերպ ավերվել:

Գերեզմանոց, XVIII-XIX դարեր: Գտնվում էր Բաքվում: Այն ավերել, իսկ շիրմաքարերն օգտագործել են «Ինտուրիստ» հյուրանոցից մինչև Կիրովի անվան զբոսայգին տանող ճանապարհի սանդուղքների շինանարարության մեջ:

Թուրքերն այժմ, հավանաբար, խիստ զբաղված են և իրենց կոչման համեմատ, աննախադեպ մեծ ծավալի «բաշխատանք» ունեն կատարելու: Չէ՞ որ դեռևս իրենց ձեռքին են ողջ Հյուսիսային Արցախն ու Կուրի ձախակողմյան նախկին հայահոծ շրջանը (էլ չենք խոսում Բաքվի մասին), որտեղ պիտի ցրվի տան հարյուր-հազարավոր հայոց շիրմաքարեր, հողին պիտի հավասարեցնեն բազմաթիվ եկեղեցիներ ու սրբավայրեր:

Այո, այնտեղ հիմա թուրքն է, ուրեմն ամեն ինչ կավերվի, իսկ կատարված ոճրի մասին, ցավոք, կիմանանք շատ ուշ, այնպես, ինչպես մինչև 1993թ. չզիտեինք, թե ինչ վիճակում էին հայ մշակույթի հուշարձանները Զեյրաջարում և Ղուբաթլիում, Չանգելանում և Աղդամում: Իսկ այն, ինչ կատարել է թուրքը ազատագրված շրջաններում իր տիրապետության օրերին, ոճիր է ոչ միայն հայերիս, այլև ընդհանրապես մարդկության հանդեպ, քանի որ այն ամենը, ինչ այլևս ջնջված է հողի երեսից, իրավամբ, համաշխարհային քաղաքակրթության մաս էր կազմում: